Հարցում կատարող՝ ՀՀ քաղաքացի
պրն. Է.Հակոբյանին

ք.Երևան, Էրեբունու համայք,
Աթոյան փողոց 53

Հարգելի պարոն Հակոբյան

Ի պատասխան Ձեր 2011թ. դեկտեմբերի 26-ի հարցման հայտնում եմ հետևյալը:

Հարցման 1-5-րդ կետերով խնդրարկվող տեղեկատվությունը դա հանրամատչելի տեղեկատվություն է, որն հրապարակված է, այդ թվում՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության (այսուհետ՝ գործակալություն) ինտերնետային կայքում՝ www.aipa.am: Նշված կետերում բարձրացված հարցերը կարգավորված են «Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (ընդունված 29.04.2010թ, թիվ ՀՕ-59-Ն, ուժի մեջ է մտել 2010թ հուլիսի 1-ից, այսուհետ՝ օրենք) և «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգով (հաստատվել է ՀՀ կառավարության 2010թ. նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշմամբ):

Հարցման 7-րդ կետում հիշատակված՝ «համընդհանուր օգտագործման (ջեներիկ) անվանումներ» հասկացության մասին հիշատակված է օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ և 15-րդ հոդվածի 1-ին մասերում: Այն բավականին հայտնի հասկացություն է, որի բացատրությանըկարող եք գտնել համապատասխան բառարաններում:

Հարցման 8-րդ կետում բարձրացված հարցը գործակալության իրավասության մեջ չի մտնում:

Հարցման 9-րդ կետում բարձրացված հարցերը գործակալության իրավասությունների մեջ չեն մտնում և կարգավորվում են դատական կարգով:

Գործակալության պետ Ա.Ազիզյան